

Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ— Յ. Դ. Դումանյան, Древнеармянский язык. Москва, 1971, 448 стр.

Ռուս հայագիտության մեջ զգալի տեղ է զբաղում գրաբարի համեմատական ուսումնասիրությունը։ Ն. Մառը հայոց լեզվի հանդեպ Ռուսաստանում ցուցաբերվող հետաքրքրությունը գոհացնելու նպատակով դեռևս 1903 թ. հատուկ ուսումնասիրություն է գրել գրաբարի մասին<sup>1</sup>։ Իսկ այսօր տարաշխարհի հայագիտության այդ գեղեցիկ ավանդույթի մի նոր արտահայտություն է էթերի Քումանյանի «Հին հայերենը»<sup>2</sup> ուսումնասիրությունը, որը կարող է գոհացում տալ ինչպես ուս համեմատաբաններին, այնպես էլ հայերենագիտության զարգացմանը ուսերեն գրականությանը հաղորդակցվող ուսուս և օտարազգի գիտնականներին։ Այսօր լեզվաբանական գիտությունը, ուստի և հայագիտությունը մեծ նվաճումներ է ձեռք բերել, այժմ գրաբարը և նրա քերականական իրողությունները համադրվում են առավել շատ լեզուների հետ։ Մյուս կողմից՝ վերջին տասնամյակներում զարգացան լեզուների կառուցվածքային և փորձառական ուսումնասիրության եղանակները, որոնց բնականաբար, անհաղորդ էր Ն. Մառի քերականությունը։ Այսպիսով, է. Քումանյանի գրախոսվող մենագրությունը արժեքավոր է հետևյալով։

1) Նյութի ուսումնասիրության ընթացքում հեղինակը համառոտ ներկայացնում է այն ամենը, ինչ տվյալ հարցը լավագույնս բացատրելու համար արված է հայագիտության մեջ և գրաբարի քերականության իրողությունները մատուցում է ոչ թե անցյալում ավանդաբար ընդունված ձևով, այլ արտասահմանյան ու հայրենական հայագիտության այսօրվա ձեռքբերումների տեսանկյունից։

2) Հենվելով գրաբարի կառուցվածքային ուսումնասիրության փորձի վրա, տրվում է գրաբարի հնչյունաբանությունը գիտության այդ բնագավառի արդի նվաճումների մակարդակով, մի բան, որ նորություն է այլալեզու հայագիտության բնագավառում։

3) Գրքի ամբողջ երկրորդ մասը նվիրված է բառի կառուցվածքին և բառակազմությանը (էջ 97—170), որը փաստորեն, նորություն է հայագիտության համար ընդհանրապես։

Գրախոսվող գրքի ներածականում (էջ 3—22) հեղինակը տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի ու գրաբարի ծագման և կազմավորման, գրաբարի՝ հնդեվրոպական լեզուների հետ ունեցած կապի, հայերենի ալլոֆոնի համակարգի, այլև գրաբար լեզվի ուսումնասիրության պատմության վերաբերյալ։ Հայերի ու հայերենի ծագման հարցում է. Քումանյանը որդեգրել է Գ. Դավանցյանի «ասիական» կողմած տեսությունը, ըստ որի «հայերի նախնիներն ապրել են խեթական պետության կազմի մեջ մտնող Փոքր Հայքի տարածության վրա, Հայաստան մ. թ. ա. XIV—XIII դդ.» (էջ 4), իսկ գրաբարը «մշակվել է հիմնականում Արարատյան դաշտավայրի բարբառների հիման վրա, որոնք IV դ. վերջին և V դ. սկզբին (երբ ստեղծվեց հայոց գիրը) մյուս բարբառների մեջ ընդհանուր ընդունելություն և առավել տարածում էին գտել» (էջ 5)։ Մի կողմ թողնելով հայերի ծագման վերաբերյալ հեղինակի որդեգրած տեսությունը, որ գտնել լեզվաբանական իմաստով քաղաքացիություն չի վայելում, չի կարելի հաշտվել գրաբարի Արարատյան բարբառների հիման վրա մշակված լինելու հետ։ Ավելին, այն մտքի հետ թե՛ «գրաբարը կազմավորվել է Արարատյան և մասամբ Տարոնի բարբառի հիման վրա» (էջ 23, տողատակ)։

Աղխատության առաջին մասը (էջ 22—96) նվիրված է գրաբարի հնչյունական կառուցվածքի ուսումնասիրությանը։ Օգտագործելով արդի արևելահայ գրական լեզվի բաղաձայնների փորձառական ուսումնասիրության արդյունքները՝ հեղինակն աշխատել է գրանք համեմատել գրաբարի հնչյունական կառուցվածքի հետ, ապա հենվելով պրոֆ. է. Աղայանի «Գրաբարի

<sup>1</sup> Н. Я. Марр, Грамматика древнеармянского языка, СПб, 1903.

<sup>2</sup> Յ. Դ. Դումանյան, Древнеармянский язык, Москва, 1971.

բերականություն<sup>3</sup> ուսումնասիրության վրա, փորձել է տալ գրաբարի հնչյունաբանական վերլուծությունը:

Ուսումնասիրության առավել հետաքրքրական բաժինը երկրորդն է (էջ 97—170), ուր քննվում են բառի կառուցվածքն ու բառակազմությունը: Այստեղ հեղինակը փորձում է տալ գրաբարի հիմնական բառակազմական սկզբունքների ամբողջական բնութագիրը: Հայտնի է, որ գրաբարը, թեև բառակազմական բազմաթիվ միջոցներից է օգտվում, սակայն դրանք բոլորն էլ միևնույն տեսակարար կշիռը չունեն. կան, այսպես կոչված, առավել և նվազ արտադրողական բառակազմական միջոցներ, որոնց վրա և շեշտը դնում է հեղինակը: Մյուս կողմից՝ նա ուշադրություն է դարձնում նաև շարահյուսական բառակազմության վրա, առավելապես բայական հարադրության և զուտ շարահյուսական տիպի, ինչպես՝ գ-այլ-ա-բռն. գ-մի-միւսնս-ա-սլ. և այլն (էջ 167):

Աշխատության երրորդ մասը (էջ 171—301) նվիրված է գոյականների, ածականների, թվականների ու դերանունների ուսումնասիրությանը: Քննելով գոյականի քերականական կարգերը, հեղինակը սեկ առ մեկ խոսում է գրաբարի հոլովների և դրանց կազմության սկզբունքի սասին՝ բոլոր հոլովմաների համար հոլովելով տիպական բառեր: Հետևելով պրոֆ. Գ. Զահուկյանի մեթոդին<sup>4</sup>, նա հոլովման փոփոխությունները դիտում է իրենց հնչյունական հերթագայության մեջ, չի առանձնացնում անկանոն հոլովման բառեր: Հոլովների կազմության բաժնում հանգամանորեն խոսում է նաև ներգոյական հոլովի մասին, վկայակոչում դրա բոլոր ներառվող արտահայտությունները: Սակայն նա երբեմն մեծացնում է դրսևորման որոշ առանձնահատկությունների իմաստը՝ եզրակացնելով որ «գրաբարի հոլովման համակարգում պետք է ընդունել ներգոյականի առանձին գոյությունը որպես յոթներորդ հոլով» (էջ 199): Դրանով հայագիտության համար կրկին վիճելի է դառնում մի հարց, որ 1815 թ. Գ. Ավետիսյանն<sup>5</sup> արդեն լուծել էր: Եթե գրաբարում որոշ բառեր, այսպես կոչված, ներգոյականում ստանում են -չ և -ում, ապա դրանք ոչ թե ներգոյականի, այլ տրականի վերջավորություններն են, որով և ի նախդրի ավելացումով կազմվում է ներգոյականի հոլովածը:

Մյուս կողմից՝ ում ճյուղի բարբառներում -ում վերջավորությամբ ներգոյականի առկայությունը գրաբարի ներգոյականի ուղղակի արտահայտությունը չէ:

Հայտնի է, որ X դ. սկսած գրաբարի նախդիրների ըմբռնումը թուլանում է. նախդիր-հոլոված կապակցություններում իմաստի ծանրությունն անցնում է բառի վրա և այսպես գրաբարյան ի հեռում, յառաջում և հետո ևս առաջում են հեռում, յառաջում, որոնք և համարանությունամբ տարածվում են: Գրաբարում, առավել ևս դասական հայերենում չի կարելի ցույց տալ թեկուզ մի գոյական, որ առանց նախդրի -ում վերջավորությամբ ներգոյականի իմաստ արտահայտի: Այնպես որ, ներգոյականի յոթներորդ հոլով լինելու հարցը հոլովների՝ ի նորոք քննության խնդրի հետ կապ չունի:

Այնուհետև է. Թումանյանը հաջորդաբար ներկայացնում է գրաբարի ածականները, դրանց հոլովումն ու համաձայնությունը, բաղդատական աստիճանների կազմությունը, թվականները, դրանց տեսակները, հոլովումն ու համաձայնությունը, ինչպես նաև դերանունների տեսակները, հոլովումն ու կիրառությունները: Ցուցական դերանունները քննելիս, հենվելով Ս. Արաբահամյանի ուսումնասիրության<sup>6</sup> վրա, նա իրավացիորեն դիտում է, որ այսպիսի, այդպիսի, այնպիսի, ընդհանրապես ձևերը, թեև ավանդված են V դ., սակայն քերականները չեն դիտել որպես դերանուններ, մինչդեռ դրանք իրոք դերանուններ են (էջ 277): Բայց ածականների համաձայնության խնդիրը Թումանյանը քննում է ավանդական ձևով՝ միավանկ, բազմավանկ, նախադաս, եռադաս արհեստական բաժանումով (էջ 241):

Աշխատության չորրորդ մասում (էջ 308—415) հանգամանորեն խոսվում է բայի ձևաբանական կառուցվածքի և բայականության առանձնահատկությունների մասին: Հեղինակը մեկ առ մեկ քննում է բայական քերականական կարգերը՝ ըստ պատահի վկայակոչելով առանձին համեմատաբանների վկայությունները այս կամ այն ձևի առաջացման և նրա կիրառական առանձնահատկությունների վերաբերյալ:

<sup>3</sup> Է դ. Աղայան, Գրաբարի քերականություն (Ա, Հնչյունաբանություն), Երևան, 1964:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխատմը և նրա ծագումը, Երևան, 1959:

<sup>5</sup> Գ. Ավետիսյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815:

<sup>6</sup> Ս. Գ. Արաբահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956:

Այնուհետև, Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկ» նմանությամբ է. Քումանյանը քննում է բայական երկու հիմքերը՝ բոլոր խոնարհումների բայերից վերցրած օրինակները խոնարհելով բոլոր եղանակների բոլոր ժամանակներով ու ձևերով, Առանձին ձևերի մասին նա տալիս է բացատրություններ կամ բերում է առկա գիտական տեսակետները, Այսպես, հայտնի է, որ գրաբարի անցյալ անկատարի համար համոզիչ բացատրություն չի եղել հայ լեզվաբանության մեջ, ահա ինչու հեղինակը մեջ է բերում Հ. Աճառյանի կարծիքը (էջ 349), ըստ որի անկատար կազմող իսկական մասնիկն է յ, որը 4-րդ՝ Ու խոնարհման բայերի անկատարում գեղեցիկ կերպով պահպանված է, դուրս մղելով նույնիսկ ւ նշյունը (թողույր-թողոյր)7, Հանգամանորեն խոսում է անցյալի հիմքի կազմության մասին նշելով, որ ց-ով բաղադրված հիմքերը թեև հանգում են հնդեվրոպական նախալեզվի skejo մասնիկին, սակայն Մեյյի բառերով ասած՝ չունեն ոչինչ աորիստական (էջ 340), Գրախոսվող գրքի հեղինակը բաժանում է համեմատաբանների այն ճիշտ տեսակետը, որ հնդեվրոպական նախալեզվին առավել հարազատ են անցյալի հիմքի արմատական կազմությունները (էջ 339)։

Ջորս խոնարհումների բոլոր բայերի ձևերն ամբողջացնելուց հետո Քումանյանը քննում է պատճառականի ածանցավոր և հարադրական կազմությունները, իսկ այնուհետև՝ անկանոն, պակասավոր և միադիմի բայերը՝ բերելով բայական բոլոր դրսևորումները, Բային հատկացված մասն ավարտվում է բաղադրյալ բայաձևերի քննությամբ, ուր բերված են գրաբարի բաղադրյալ բոլոր կազմությունները, Բայաձևերի սեռա-կերպային հարցում հեղինակը բերում է զգոժնւ (ներգործակերպ), զգոժիւ (կրավորակերպ) ձևերը, սակայն ազդում, զգալեամ, բազում, զեկալցում և այլն չեն բերվում որպես ներգործակերպ (ինչպես անուշագրությամբ վերպել է գրաբարի որոշ ձեռնարկներում), այլ որպես ընդհանրական ձևեր։

Ուսումնասիրության հինգերորդ բաժինը (էջ 416—441) նվիրված է շթեքվող խոսքի մասերին, Այստեղ համառոտակի ներկայացված են գրաբարի նախդիրներն ու նախադրությունները, մակբայները, եղանակավորող բառերը, շաղկապներն ու ձայնարկությունները։

Այսպիսով, գրախոսվող աշխատության մեջ ներկայացված են գրաբարի ամբողջ ձևաբանությունը, ինչպես նաև նշյունաբանությունն ու բառակազմությունը, Հասկանալի է, որ նման ուսումնասիրության մեջ քննարկվող բոլոր հարցերը միատեսակ խորությամբ չէին կարող բացահայտվել. որոշ մասեր խորն ու ամբողջական են, իսկ այլուր հեղինակն աշխատել է առավելապես գրաբարի լեզվական իրողությունները մատուցել, Սակայն, ընդհանուր առմամբ, հեղինակը կարողացել է նյութը մատուցել պատշաճ գիտականությամբ, Ահա ինչու սույն մեկնադրությունը կարող է ծառայել թե՛ որպես համեմատական ուսումնասիրություն հին հայերենի վերաբերյալ և թե՛ որպես գրաբարի հետևողական ու ամբողջական ուսուցման մի գեղեցիկ ձեռնարկ։

Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ,

<sup>7</sup> Ավելի հանգամանորեն տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. IV, Բ, էջ 524—529։